ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռումինիայի Կառավարության միջև դիվանագիտական և ծառայողական անձնագիր ունեցողների համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռումինիայի Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ղեկավարվելով ընդհանուր ցանկությամբ՝ դյուրացնել իրենց այն քաղաքացիների փոխադարձ այցելությունները, որոնք ունեն դիվանագիտական և ծառայողական անձնագրեր,

նպատակ ունենալով ամրապնդել իրենց փոխհամագործակցությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

1. Հայկական Պայմանավորվող կողմը Ռումինիայի այն քաղաքացիներին, որոնք ունեն դիվանագիտական և ծառայողական վավերական անձնագրեր, Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու/այնտեղ գտնվելու նպատակով 90 (իննսուն) օրը չգերազանցող ժամկետով (առաջին անգամ մուտք գործելու օրվանից ցանկացած վեց ամսվա ընթացքում) կազատի մուտքի արտոնագիր ստանալու պարտավորությունից:

2. Ռումինական Պայմանավորվող կողմը Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, որոնք ունեն դիվանագիտական և ծառայողական վավերական անձնագրեր, Ռումինիա մուտք գործելու/այնտեղ գտնվելու նպատակով 90 (իննսուն) օրը չգերազանցող ժամկետով (առաջին անգամ մուտք գործելու օրվանից ցանկացած վեց ամսվա ընթացքում) կազատի մուտքի արտոնագիր ստանալու պարտավորությունից:

3. Պայմանավորվող կողմերի յուրաքանչյուր պետության այն քաղաքացիները, որոնք ունեն դիվանագիտական և ծառայողական վավերական անձնագրեր, և որոնք մտադիր են մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում գտնվել 90 (իննսուն) օրվանից ավելի ժամկետով, պետք է նախապես ստանան մուտքի արտոնագրեր: Մուտքի արտոնագիրը անվճար կտրամադրվի համապատասխան պետության դիվանագիտական առաքելության կողմից:

Հոդված 2

1. Մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում հավատարմագրված Պայմանավորվող կողմերի դիվանագիտական առաքելությունների կամ հյուպատոսական հիմնարկների այն անդամները, որոնք ունեն դիվանագիտական և ծառայողական վավերական անձնագրեր, և նրանց ընտանիքների անդամները ազատվում են մուտքի արտոնագիր ստանալու պարտավորությունից դիվանագիտական առաքելությունների կամ հյուպատոսական հիմնարկների անդամների ծառայության ժամանակահատվածի ընթացքում՝ նախնական ծանուցմամբ:

2. 1-ին կետի դրույթները համապատասխան հաստատության նախնական ծանուցմամբ կիրառվում են նաև մյուս ծառայողների՝ Պայմանավորվող կողմերի պետությունների տարածքներում գտնվող միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում հավատարմագրվածների նկատմամբ, որոնք Պայմանավորվող կողմերի պետությունների քաղաքացիներ են, ունեն

դիվանագիտական և ծառայողական վավերական անձնագրեր:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերի պետությունների քաղաքացիները կհետևեն այն Պայմանավորվող կողմի պետության տարածքում գործող օրենսդրությանը, որտեղ նրանք գտնվում են:

Հոդված 4

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրեն իրավունք է վերապահում ժամանակավորապես կասեցնելու սույն Համաձայնագրի դրույթները ամբողջությամբ կամ մասամբ՝ ելնելով պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության պահպանման կամ այլ լուրջ պատճառներից: Այն Պայմանավորվող կողմը, որը նախաձեռնել է նշված կասեցումը կամ դրա դադարեցումը, համապատասխանաբար, գրավոր դիվանագիտական ուղիներով դրանց մասին անհապաղ կծանուցի մյուս Պայմանավորվող կողմին:

2. Նման կասեցումը և դրա դադարեցումը, համա-պատասխանաբար, ուժի մեջ կմտնեն հայտագիրը համապատասխան Պայմանավորվող կողմի ստանալու օրվանից:

Հոդված 5

1. Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առնվազն երեսուն (30) օր առաջ դիվանագիտական ուղիներով կփոխանակեն իրենց դիվանագիտական և ծառայողական անձնագրերի նմուշները:

2. Դիվանագիտական և ծառայողական անձնագրերում փոփոխությունների դեպքում համապատասխան Պայմանավորվող կողմը մյուս Պայմանավորվող կողմին կուղարկի նոր նմուշները, դրանց կիրառելիության վերաբերյալ տեղեկության հետ միասին, գործածության մեջ դրվելուց առնվազն երեսուն (30) օր առաջ:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրը կդադարեցվի Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ կարող է չեղյալ հայտարարվել յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի կողմից մյուս Պայմանավորվող կողմին ուղղված գրավոր ծանուցմամբ: Սույն Համաձայնագիրը կհամարվի չեղյալ հայտարարված ծանուցումը ստանալուց հետո երեսուներորդ (30) օրը:

Հոդված 7

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի վերջին գրավոր ծանուցումը ստանալուց հետո երեսուներորդ (30) օրը, որով Պայմանավորվող կողմերը միմյանց կծանուցեն իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսված՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրավական ընթացակարգերի կատարման մասին:

2. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուն պես դիվանագիտական և ծառայողական անձնագրեր ունեցող՝ Հայաստանի և Ռումինիայի քաղաքացիների նկատմամբ կիրառվող մուտքի արտոնագրի ռեժիմի վերաբերյալ երկու Պայմանավորվող կողմերի միջև որևէ այլ՝ նախկինում ձեռք բերված պայմանավորվածություն կդադարի գործել:

Կատարված է Բուխարեստ քաղաքում 2003 թվականի նոյեմբերի 17-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ռումիներեն և անգլերեն, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանության ժամանակ տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

***Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2004 թվականի հուլիսի 23-ից:**